Արձանագրություն N 2-1

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-24/29 ծածկագրով Կառավարական թիվ 3 շենքի ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ամրացված հարկի տարածքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.11.2024թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Առուստամյան
Կ. Բարսեղյան
Ա. Մարգարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Հ. Մնացականյան

1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Թորոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2024 թվականի նոյեմբերի 22-ին ժամը 10:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոսը, էլ. փոստի հասցեն	Գնման գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<ԱՎԱԳ-ՇԻՆ>> ՍՊԸ	ք. Հրազդան, Քաղսի 4 թղմ. 88 041 210020 tender-consult1@yandex.ru	43 837 800	31 277 500	6 255 500	37 533 000
2	<<Ֆոլկ>>, <<ՑԵՆՏՌԱ ԿՈԼ>> և <<ՄԻԹԱՐՏ>> ՍՊԸ-ների կոնսորցիում	ք. Երևան Ազատության 24/15 093 605005 contact.folkllc@gmail.com		32 410 000	6 482 000	38 892 000

1.2 Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1.3 <<Ֆոլկ>>, <<ՑԵՆՏՌԱ ԿՈԼ>> և <<ՄԻԹԱՐՏ>> ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքը չի համապատասխանում հրավերով

հրապարակված երաշխիքի ձևաչափին և բովանդակային առումով չի պարունակում հրապարկված երաշխիքում ներառված անհրաժեշտ տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը և հրավերի 8.2 կետը (հայտի ապահովման անհամապատասխանությունը հրավերի պահանջներին, ինչը շտկման ենթակա չէ) գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<Ֆոլկ>>, <<ՑԵՆՏՌԱ ԿՈԼ>> և <<ՄԻԹԱՐՏ>> ՍՊԸ-ների կոնսորցիումի հայտը:

Մասնակցի կողմից ներկայացված մյուս փաստաթղթերը չեն գնահատվել անհրաժեշտության բացակայությամբ պայմանավորված (մասնակցի հայտը մերժվել է հայտի ապահովման անհամապատասխանության հիմքով):

1.4 <<ԱՎԱԳ-ՇԻՆ>> ՍՊԸ-ին հայտի ապահովման բանկային երաշխիք տրամադրող բանկի կողմից երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ներկայացվել գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender1@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ համաձայն հրավերի N 3 հավելվածի:

Հիմք ընդունելով Կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ <<ԱՎԱԳ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մինչև իրավասու մարմնի կողմից եզրակացություն ստանալու օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Ա. Թորոսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատման նիստ հրավիրել վերը նշված եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Թորոսյան

Անդամ՝ ---------- Է. Առուստամյան

---------- Կ. Բարսեղյան

---------- Ա. Մարգարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան